ԱԶՆՎԱՄՈՐՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԸ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ ԽԱՂԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(Հանձնարարվում է խաղի անցկացումից առաջ)





Ծանոթացի՛ր՝ սա Մորին է: Հայաստանի մի փոքրիկ գյուղում առավոտյան ժամը վեցին, երբ արևը նոր է բարձրանում սարերի հետևից, թփի վրա արթնանում է մի փոքրիկ կարմիր ազնվամորի: Անունը դնենք Մորի: Մորին դեռ չգիտի, բայց նրան մեծ ճանապարհորդություն է սպասվում: Երեք օր հետո նա կարող է հայտնվել Երևանի սուպերմարկետի դարակին՝ գեղեցիկ թափանցիկ տուփի մեջ, կամ մուրաբայի բանկայում, կամ նույնիսկ ինքնաթիռով թռչել այլ երկիր: Իսկ եթե ճանապարհին ինչ-որ բան սխալ գնա... Նա պարզապես կփչանա արկղի հատակին:

Այն ճանապարհը, որով Մորին անցնում է թփից մինչև մեր սեղանը, կոչվում է ԱՐԺԵՇՂԹԱ: Ինչո՞ւ «արժեք» և ինչո՞ւ «շղթա»: Որովհետև այն կազմված է իրար միացած օղակներից՝ ինչպես շղթան, և ամեն օղակում ինչ-որ մեկը ինչ-որ օգտակար բան է ավելացնում Մորիին՝ արժեք է ավելացնում: Եվ ինչպես իսկական շղթան, եթե մեկ օղակը կտրվի՝ ամբողջ շղթան փլուզվում է:

Արժեշղթան բոլոր այն քայլերի և դերակատարների ամբողջությունն է, որոնց շնորհիվ ապրանքը դաշտից հասնում է սպառողին՝ ամեն քայլում ավելի արժեքավոր դառնալով:
«ԱՋՆՎԱՄՈՐՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԸ»

Հիմա անցնենք Մորու ճանապարհի փուլերով:

ՓՈՒԼ 1. ԱՄԵՆ ԻՆՉ ՍԿՍՎՈՒՄ Է ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՑ

Մորին թփի վրա հայտնվեց ոչ ինքն իրեն: Դեռ երկու տարի առաջ ֆերմերը գնաց ՏՆԿԱՐԱՆ և ընտրեց տնկիներ: Սա շատ կարևոր որոշում էր. առողջ, ստուգված տնկին տասը տարի լավ բերք է տալիս, իսկ հիվանդ տնկին... Դա ֆերմերն իմացավ միայն երկու-երեք տարի հետո, երբ արդեն ուշ էր:

Հետո ֆերմերին պետք եղան պարարտանյութ, ջուր, հենասյուներ, ցանց՝ Մորիին կարկուտից պաշտպանելու համար: Այս ամենը տալիս են ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԸ՝ արժեշղթայի առաջին դերակատարները:

ԿԱՆԱՉ ԼՈՒԾՈՒՄ

Կաթիլային ոռոգումը ջուրը կաթիլ առ կաթիլ հասցնում է ուղիղ բույսի արմատին: Այդպես ծախսվում է շատ ավելի քիչ ջուր, քան առվով ջրելիս, իսկ բերքը՝ ավելի լավն է լինում: Խնայել բնությունը և շահել միաժամանակ՝ հնարավոր է:

ՓՈՒԼ 2. ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ՖԵՐՄԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ՖԵՐՄԵՐԸ արժեշղթայի սիրտն է: Ամբողջ տարին նա խնամում է թփերը՝ էտում է, ջրում, պարարտացնում, պայքարում վնասատուների դեմ: Բայց ժամանակակից ֆերմերը միայն հողագործ չէ. նա նաև ձեռնարկատեր է՝ հաշվում է ծախսերը, կառավարում է ռիսկերը, որոշում է, թե ում և ինչ գնով վաճառի:

Ֆերմերը միայնակ չէ: Նրան խորհուրդ է տալիս ԽՈՐՀՐԴԱՏՈՒ - ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԸ՝ բույսերի մասնագետը: Մեկ ճիշտ խորհուրդը (օրինակ՝ երբ էտել կամ ինչ տեսակ (սորտ) ընտրել) կարող է բերքը զգալիորեն մեծացնել:

ԿԱՆԱՉ ԼՈՒԾՈՒՄ

Անցյալ տարվա տերևները, էտած ճյուղերը և ջարդված պտուղները չեն թափվում. դրանցից պատրաստվում է ԿՈՄՊՈՍՏ՝ բնական պարարտանյութ: Այն, ինչ երեկ «աղբ» էր, այսօր սնուցում է նոր բերքը:

ՓՈՒԼ 3. ԲԵՐՔԱՀԱՎԱՔ. ԱՄԵՆԱԼԱՐՎԱԾ ՊԱՀԸ

Եվ ահա Մորին հասունացել է: Հիմա սկսվում է ամենադժվարը: Ազնվամորին այնքան փափուկ է, որ ոչ մի մեքենա չի կարող այն հավաքել. միայն մարդու զգույշ մատները: Հավաքում են վաղ առավոտյան, քանի դեռ զով է: Մեկ հավաքողը մեկ օրում հավաքում է ընդամենը 15 - 25 կիլոգրամ:

Եվ ամենակարևորը՝ ժամանակը: Հասունացած ազնվամորին թփի վրա սպասում է ընդամենը երկու - երեք օր: Եթե հավաքողներ չգտնվեն, բերքը կփչանա հենց թփի վրա: Իրական կյանքում երբեմն ամենասակավ ռեսուրսը փողը չէ, այլ աշխատող ձեռքը:

Բերքահավաքի վրա ծախսվում է ֆերմերի ամբողջ տարվա ծախսերի մոտ կեսը: Ահա թե ինչու է ամեն մի հատիկն այդքան թանկ:

ՓՈՒԼ 4. ՑՈՒՐՏԸ, ՈՐ ՓՐԿՈՒՄ Է. ՍԱՌԸ ՇՂԹԱ ԵՒ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ

Մորին հավաքված է: Հիմա նա մրցում է ժամացույցի հետ: Հավաքելուց հետո առաջին մեկ - երկու ժամում նրան պետք է արագ սառեցնել մինչև 0 - 2 աստիճան: Ամեն ուշացած ժամը «գողանում է» պահպանման մեկ օր: Այդ պատճառով պետք են ՍԱՌՆԱՐԱՆՆԵՐ և սառնարանով բեռնատարներ: Այս անընդհատ ցուրտ ճանապարհը կոչվում է ՍԱՌԸ ՇՂԹԱ:

Իսկ եթե Մորին մի փոքր ջարդվե՞լ է կամ շատ մա՞նր է: Ոչ մի խնդիր: Նրան սիրով կվերցնի ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԳՈՐԾԱՐԱՆԸ և կդարձնի մուրաբա, հյութ կամ կոնֆիտյուր: Կա նաև կախարդական մի բան՝ շոկային սառեցում (IQF), երբ ամեն հատիկ առանձին սառեցվում է -35 աստիճանում: Այդպիսի ազնվամորին կարող է պահվել երկու տարի և ճանապարհորդել աշխարհով մեկ:

ԿԱՆԱՉ ԼՈՒԾՈՒՄ

Սառնարանը թանկ է մեկ ֆերմերի համար, բայց եթե օրինակ՝ վեց ֆերմեր միավորվեն և միասին գնեն մեկ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԱՌՆԱՐԱՆ, ամեն մեկը կվճարի վեց անգամ քիչ: Համատեղ օգտագործումը նույնպես կանաչ լուծում է. մեկ ընդհանուր սարքը ավելի քիչ ռեսուրս է ծախսում, քան վեցը՝ առանձին - առանձին:

ՓՈՒԼ 5. ԻՐԱՑՈՒՄ. Ո՞ՒՄ ՍԵՂԱՆԻՆ ԿՀԱՍՆԻ ՄՈՐԻՆ

Հիմա գլխավոր հարցը՝ ո՞ւմ վաճառել: Ֆերմերն ունի մի քանի ճանապարհ, և ամեն մեկն ունի իր գինն ու իր պայմանները:

• **ՄԹԵՐՈՂԸ**. գալիս է գյուղ բեռնատարով, տեղում կանխիկ վճարում է և ամեն ինչ վերցնում: Ամենահեշտն է, բայց առաջարկվում է ամենացածր գինը:

• **ՍՈՒՊԵՐՄԱՐԿԵՏԸ**. վճարում է ավելի շատ, բայց պահանջում է գեղեցիկ փաթեթավորում, միշտ նույն լավ որակը և պաշտոնական գրանցում:

• **ԱՐՏԱՀԱՆՈՂԸ**. տալիս է ամենաբարձր գինը, բայց ուզում է շատ մեծ քանակ և հատուկ սերտիֆիկատներ: Մեկ ֆերմերը դա մենակ չի կարող անել. պետք է միավորվել ուրիշների հետ:

• **ՍԵՓԱԿԱՆ ՎԵՐԱՄՇԱԿՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ**. կարելի է նաև սեփական մուրաբան արտադրել և սեփական ապրանքանիշով վաճառել: Կստացվի ամենամեծ շահույթը, բայց նաև կպահանջվի ամենամեծ աշխատանքը:

Իսկ շղթայի ամենավերջում կանգնած ենք մենք՝ ՍՊԱՌՈՂՆԵՐՍ: Երբ խանութում ընտրում ենք տեղական, օրգանական կամ գեղեցիկ փաթեթավորված ապրանք, մենք «քվեարկում» ենք մեր փողով և որոշում, թե որ ֆերմերը կհաջողի:

ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԸ

Կան դերակատարներ, որոնք Մորիին անգամ չեն դիպչում, բայց առանց նրանց ամբողջ շղթան կկանգնի: Սրանք արժեշղթայի երկրորդային՝ աջակցող դերակատարներն ու գործառույթներն են.

• **ԲԱՆԿԸ** պարտքով փող է տալիս ֆերմերին, որ նա կարողանա այգի հիմնել, և սպասում է մինչև բերքը եկամուտ բերի:

• **ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ** ապահովագրական վճարի դիմաց վերցնում է ռիսկը իր վրա. եթե կարկուտը ջարդի բերքը, ֆերմերը փոխհատուցում կստանա:

• **ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ** սահմանում է կանոնները, ստուգում է սննդի անվտանգությունը և օգնում է ֆերմերներին սուբսիդիաներով:

• **ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ** - ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՆԵՐԸ ստեղծում են նոր տեսակներ (սորտեր) և սովորեցնում են ավելի լավ աշխատել:

ՇՂԹԱ, ՈՐՏԵՂ ՈՉԻՆՉ ՉԻ ԿՈՐՉՈՒՄ

Սովորական տնտեսությունն աշխատում է այսպես. վերցնել → արտադրել → օգտագործել → թափել: Բայց կա ավելի խելացի ձև՝ ՇՐՋԱՆԱՁԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, որտեղ «աղբ» հասկացությունը գրեթե չկա, որովհետև ամեն մնացորդ դառնում է նոր բանի սկիզբ: Տես, թե ինչպես է դա աշխատում ազնվամորու շղթայում:

1. Ջարդված և մանր պտուղները չեն թափվում՝ դառնում են մուրաբա և հյութ:
2. Մուրաբայի արտադրության մնացորդից (կորիզներից) ստանում են յուղ՝ կոսմետիկայի համար:
3. Տերևներն ու էտած ճյուղերը դառնում են կոմպոստ և վերադառնում հողի մեջ:
4. Պլաստիկ մեկանգամյա տարաների փոխարեն օգտագործվում են բազմակի օգտագործման արկղեր:
5. Ֆերմերները համատեղ օգտագործում են սառնարաններ, տեխնիկա և գիտելիքներ:

Իսկ ԿԱՅՈՒՆ տնտեսությունը ենթադրում է՝ աշխատել այնպես, որ հողը, ջուրը և մարդիկ չսպառվեն, և տասը տարի հետո էլ նույն տեղում ազնվամորի աճի:

ՖԵՐՄԵՐԻ «ԹՇՆԱՄԻՆԵՐԸ» ԵՎ ԽԵԼԱՑԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ֆերմեր լինելը մի քիչ նման է մարտիկ լինելուն. ամեն տարի պետք է պայքարել անտեսանելի «թշնամիների» դեմ: Դրանք կոչվում են ՌԻՍԿԵՐ: Բայց ամեն ռիսկի դեմ մարդիկ հորինել են խելացի պաշտպանություն՝ տեխնոլոգիա կամ հնարք: Ծանոթացիր գլխավորների հետ:

• **ԿԱՐԿՈՒՏ**: Հայաստանի ամենավտանգավոր «թշնամին». 10 - 15 րոպեում կարող է ջարդել ամբողջ տարվա բերքը: Պաշտպանությունը՝ ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ ՑԱՆՑ, որը այգու վրա փռվում է վրանի պես, կամ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ֆերմերը ամեն տարի փոքր գումար է վճարում, իսկ եթե աղետ պատահի՝ ընկերությունը փոխհատուցում է կորուստը:

• **ՑՐՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ**: Գարնանը ուշ ցուրտը կարող է «այրել» ծաղիկները, աշնանը վաղ ցուրտը՝ բերքի մնացորդը: Պաշտպանությունը՝ ԱԳՐՈԹԵԼԸ (թեթև սպիտակ ծածկոց, որ վերմակի պես տաքացնում է բույսերին), ջերմոցներն ու թունելները, և ամենախորամանկը՝ տարբեր ժամկետներում հասունացող տեսակների (սորտերի) խառնուրդը, որ մեկ ցուրտ գիշերը չկարողանա ամեն ինչ ոչնչացնել:

• **ԵՐԱՇՏ ԵՎ ՋՐԻ ՍԱԿԱՎՈՒԹՅՈՒՆ**: Հին խողովակները երբեմն վթարվում են, և այգին օրերով մնում է առանց ջրի, իսկ պտուղը մանրանում է: Պաշտպանությունը՝ ԿԱԹԻԼԱՅԻՆ ՈՌՈԳՈՒՄ, որը քիչ ջրով շատ բան է անում, սեփական ջրամբարը կամ հորատանցքը՝ «պահեստային ջուր»:

• **ՀԻՎԱՆԴ ՏՆԿԻ ՈՒ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐ**: Հիվանդ տնկին առողջից չի տարբերվում, և խնդիրը երևում է միայն 2 - 3 տարի հետո, երբ գումարն արդեն ներդրված է: Պաշտպանությունը՝ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՎԱԾ, ստուգված տնկանյութ գնելը և խորհրդատու - գյուղատնտեսի խորհուրդը: Հիշիր՝ էժանը երբեմն ամենաթանկն է:

• **ԱՇԽԱՏՈՒԺԻ ՊԱԿԱՍ**: Բերքը հասունացել է, իսկ հավաքող ձեռքեր չկան, որովհետև հարևան գյուղում էլ ծիրանի հավաք է: Պաշտպանությունը՝ վարձու աշխատողների հետ ՎԱՂ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԵԼԸ, ֆերմերների փոխօգնությունը և «Հավաքիր ինքդ» օրերը, երբ գնորդներն իրենք են գալիս ու հավաքում:

• **ԳՆԻ ԱՆԿՈՒՄ ԵՎ ՄԵԿ ՇՈՒԿԱՅԻՑ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ**: Երբ բոլորը միաժամանակ բերք ունեն, գինը կտրուկ ընկնում է, իսկ երբ ապրանքդ միայն մեկ երկիր ես ուղարկում, այդ երկրի մեկ որոշումը կարող է փակել քո ճանապարհը: Պաշտպանությունը՝ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ (գինը ամրագրվում է դեռ գարնանը), ՍԱՌԵՑՈՒՄԸ (սառեցված ապրանքը կարող է սպասել լավ գնի ամիսներով) և տարբեր շուկաներ ունենալը:

• **ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՇՈԳ**: Հավաքած պտուղը շոգին ժամ առ ժամ կորցնում է թարմությունը, իսկ ուշացած բեռնատարը կարող է ամբողջ օրվա արդյունքը փչացնել: Պաշտպանությունը՝ ՍԱՌԸ ՇՂԹԱՆ՝ դաշտային նախնական սառեցում, սեփական կամ համայնքային սառնարան և սառնարանով բեռնատար:

Ուշադրություն դարձրու. պաշտպանության միջոցների մեծ մասը փող արժե՝ ցանց, ապահովագրություն, սառնարան, լավ տնկի: Թույլ ֆերմերը դրանք համարում է «ավելորդ ծախս»: Խելացի ֆերմերը գիտի՝ դա ներդրում է. մեկ անգամ վճարում ես, որ տասը տարի հանգիստ քնես: Ուստի՝ անգամ եթե դրա համար դրամական միջոցներ չկան, փորձում է դրանք գտնել: Իսկ ամենահզոր պաշտպանությունը ոչ մի փող չարժե. դա ՄԻԱՎՈՐՎԵԼՆ է. կոոպերատիվում ռիսկերն էլ են կիսվում, ոչ միայն ծախսերը:

ԱՄՓՈՓԵԼՈՎ ՆՇԵՆՔ՝

1. Ապրանքի բնույթը թելադրում է ամեն ինչ: Ազնվամորին փափուկ է և արագ փչացող, դրա համար էլ ամբողջ շղթան կառուցված է արագության և սառեցման վրա:
2. Ամենամեծ կորուստը լինում է ոչ թե դաշտում, այլ դաշտից հետո՝ երբ սառնարան չկա կամ բեռնատարն ուշանում է:
3. Միասին ավելի ուժեղ եք: Մեկ փոքր արտադրությամբ զբաղվող ֆերմերի հետ գինը սակարկում են, իսկ կոոպերատիվի հետ՝ բանակցում:
4. Ֆերմերի եկամուտն աճում է ոչ թե ավելի շատ քրտնելով, այլ շղթայով առաջ շարժվելով՝ պահել, փաթեթավորել, վերամշակել, սեփական բրենդային անուն ստեղծել:
5. Ռիսկից պաշտպանվելը (ցանց, ապահովագրություն, պայմանագիր) ծախս չէ, այլ խելացի ներդրում:

ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՓՈՔՐԻԿ ԲԱՌԱՐԱՆ

Արժեշղթա — ճանապարհը դաշտից մինչև սպառող, որտեղ ամեն քայլում ապրանքն ավելի արժեքավոր է դառնում:

Դերակատար — մարդ կամ կազմակերպություն, որն իր դերն ունի շղթայում (ֆերմեր, մթերող, վերամշակող, վաճառող...):

Կոոպերատիվ — ֆերմերների կամավոր միավորում՝ ծախսերը կիսելու և միասին ավելի ուժեղ բանակցելու համար:

Սառը շղթա — անընդհատ սառեցման պայմաններ՝ դաշտից մինչև խանութ, առանց որի փչացող ապրանքը չի փրկվի:

ԱՁ, ՍՊԸ — Անհատ ձեռնարկատեր, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ ձեռնարկատիրական գործունեության իրավակազմակերպական ձևեր, որոնք տարբերվում են պատասխանատվության չափով և կառավարման կարգով:

Շրջանաձև տնտեսություն — տնտեսություն, որտեղ մնացորդները չեն թափվում, այլ դառնում են նոր արտադրանքի հումք:

Սերտիֆիկատ — պաշտոնական փաստաթուղթ, որը հավաստում է ապրանքի որակը, անվտանգությունը կամ համապատասխանությունը որոշակի չափանիշներին:

Աճուրդ — վաճառքի ձև, որտեղ գնորդները մրցակցում են ապրանքի համար, և այն գնում է ամենաբարձր գին առաջարկողը:

Վարկ — բանկի կամ այլ կազմակերպության կողմից տրամադրվող գումար, որը ֆերմերը հետ է վերադարձնում ապագայում՝ ստացված եկամուտից, վճարելով նաև վարկի տոկոսներ:

Մթերող — անձ կամ կազմակերպություն, որը գյուղից գնում է ֆերմերի բերքը՝ այն հետագայում վաճառելու կամ վերամշակելու համար:

Վերամշակող — կազմակերպություն, որը հում բերքը վերածում է պատրաստի արտադրանքի (օրինակ՝ ազնվամորուց պատրաստում է մուրաբա կամ հյութ):

Արտահանող — կազմակերպություն, որն ապրանքը գնում է և տեղափոխում այլ երկրներ՝ օտարերկրյա շուկաներում վաճառելու համար:

Շոկային սառեցում — սառեցման տեխնոլոգիա, երբ յուրաքանչյուր հատիկ առանձին սառեցվում է շատ ցածր ջերմաստիճանում (-35°C), որպեսզի պահպանվեն դրա որակն ու թարմությունը երկար ժամանակով:

Ապահովագրություն — պայմանագիր, որով ֆերմերը վճարում է որոշակի գումար՝ ռիսկերի (օրինակ՝ կարկուտի) պատճառած վնասը փոխհատուցելու համար:

Կաթիլային ոռոգման համակարգ — ջրման եղանակ, որը ջուրը կաթիլ առ կաթիլ հասցնում է անմիջապես բույսի արմատին՝ խնայելով ջուրը:

Պաշտպանիչ ցանց/ագրոթել — հատուկ ծածկոցներ, որոնք պաշտպանում են բույսերը կարկուտից, ցրտից և այլ բնական վտանգներից:

Կոմպոստ — օրգանական թափոններից (տերևներ, ճյուղեր, փչացած պտուղներ) ստացված բնական պարարտանյութ, որը սնուցում է հողը:

Կայունություն — աշխատելու ձև, որը չի սպառում բնությունն ու մարդկանց և կարող է շարունակվել շատ երկար:

Ռիսկ — հնարավոր վտանգ, որը կարող է վնասել բերքին կամ եկամտին (կարկուտ, ցուրտ, երաշտ, գնի անկում): Ռիսկը կանխատեսելը և դրանից պաշտպանվելը կոչվում է ռիսկի կառավարում:

ՍՏՈՒԳԻ՛Ր ԻՆՔԴ ՔԵԶ

1. Թվարկիր արժեշղթայի փուլերը՝ Մորու անցած ճանապարհի քայլերի հերթականությամբ:
2. Ինչո՞ւ է բերքահավաքը ազնվամորու շղթայի ամենավտանգավոր պահը: Ի՞նչ երկու ռեսուրս է այդ պահին ամենասակավը:
3. Ֆերմերն ունի 100 կգ ազնվամորի, որից 20 կգ-ը ջարդված է: Ի՞նչ անի ջարդվածի հետ, որ չկորցնի: Առաջարկիր շրջանաձև լուծում:
4. Նշիր երեք «անտեսանելի օգնական» և բացատրիր՝ ինչ կպատահի շղթային, եթե նրանցից մեկը վերանա:
5. Ինչո՞ւ վեց ֆերմերի համար մեկ ընդհանուր սառնարանը և՛ էժան է, և՛ «կանաչ»:
6. Ընտրիր հայաստանյան ագրոբիզնեսի երեք ռիսկ և ամեն մեկի համար նշիր մեկական պաշտպանության միջոց կամ տեխնոլոգիա:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ընտրիր քո սիրելի ուտելիքը՝ պանիր, մեղր, լավաշ, խաղողի հյութ և այլն, և գծիր նրա արժեշղթան՝ հինգ փուլով, դերակատարներով և գոնե մեկ կանաչ լուծումով ամեն փուլում: Հետո պատմիր ընտանիքիդ, թե ինչ ճանապարհ է անցնում այդ ուտելիքը մինչև ձեր սեղանին հասնելը:

Ծրագիրն իրականացվում է Փախստականների հարցերով էստոնական խորհրդի կողմից՝ «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի և «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի հետ համագործակցությամբ: Ծրագիրը ֆինանսավորվում է Էստոնիայի ժողովրդի կողմից:

estdev
From the people of Estonia

Փախստականների հարցերով
Էստոնական խորհուրդ

KOMITAS ACTION SUISSE - ARMÉNIE

SUSTAINABLE SCHOOL
FEEDING PROGRAM